

European Treaty Series - No. 102



COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE

**ՍՊԱՆԴԻ ԵՆԹԱԿԱ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ**

Ստրասբուրգ, 10.05.1979թ.

Սույն Կոնվենցիան ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները,

գիտակցելով, որ ցանկալի է ապահովել սպանդի ենթարկվող կենդանիների պաշտպանությունը,

գիտակցելով, որ իրենց երկրներում անհրաժեշտ է կիրառել սպանդի այնպիսի մեթոդներ, որոնք հնարավորիս կմեղմեն կենդանիների տառապանքն ու ցավը,

գիտակցելով, որ սպանդի ժամանակ կենդանիներին պատճառած վախը, տանջանքը, տառապանքը և ցավը կարող են ազդել մսի որակի վրա,

համաձայնվեցին ներքոշարադրյալի մասին.

Գլուխ 1 – Հիմնական դրույթներ

Հոդված 1

1. Սույն Կոնվենցիան վերաբերում է ընտանի միասնբակավոր, որոճող կենդանիների, խոզերի, ճագարների և թռչունների փոխադրությանը, սպանդանոցին կից անասնոցներում պահելուն, անշարժեցմանը, շճմեցմանը և սպանդին :
2. Սույն Կոնվենցիայի իմաստով.

Սպանդանոց նշանակում է ցանկացած շինություն, որը գտնվում է սանիտարական հսկողության ներքո և նախատեսված է կենդանիների մասնագիտացված սպանդի համար՝ սպառման կամ այլ նպատակներով մսի արտադրության նպատակով :

Կենդանիների փոխադրություն նշանակում է կենդանիների իջեցում տրանսպորտից կամ նրանց փոխադրումը բեռնաթափման հարթակներից, մտուրքներից կամ սպանդանոցներին կից գտնվող փարախներից դեպի շինություններ կամ վայրեր, որտեղ նրանք պետք է ենթարկվեն սպանդի:

Սպանդանոցին կից անասնոցում պահելը նշանակում է կենդանիների պահումը փարախում, մտուրքում կամ սպանդավայրին մոտ գտնվող ծածկված տարածքներում, մինչ նրանց սպանդի ենթարկելը, անհրաժեշտ խնամք /ջուր, կեր, հանգիստ/ ցուցաբերելու նպատակով:

Կենդանու շարժունակության սահմանափակում (անշարժացում) նշանակում է կենդանու նկատմամբ սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան գործողությունների կիրառում՝ ուղղված կենդանու շարժումների սահմանափակմանը՝ նրա շճմեցումը կամ սպանդը թեթևացնելու նպատակով :

Շճմեցում նշանակում է սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան ցանկացած գործողություն, որի կիրառումը կենդանիների նկատմամբ առաջացնում է անգիտակից վիճակ՝ ընդհուպ մինչև մահվան պահը, դրանով հնարավոր դարձնելով տանջանքից խուսափումը:

Սպանդ նշանակում է կենդանուն մահ պատճառելը՝ նրա շարժունակությունն սահմանափակելուց, շճմեցնելուց և արնագրկելուց հետո՝ նկատի ունենալով սույն Կոնվենցիայի 3-րդ գլխում նախատեսված բացառությունները :

Հոդված 2

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար սույն Կոնվենցիայի դրույթների կիրառումը:
2. Ոչինչ սույն Կոնվենցիայում չպետք է սահմանափակի Պայմանավորվող կողմերին՝ ընդունելու ավելի պարտավորեցնող օրենքներ՝ կենդանիների պաշտպանության նպատակով:
3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է երաշխավորի, որ սպանդանոցների նախագիծը, կառուցվածքը և հարմարանքները, ինչպես նաև այդ սպանդանոցների շահագործումն ու աշխատանքն այնպիսին են, որ հնարավորություն են տալիս ապահովելու սույն Կոնվենցիայով նախատեսված համապատասխան պայմանները՝ կենդանիներին ցանկացած անհանգստությունից, ցավից և տանջանքից ազատելու նպատակով:
4. Սպանդանոցներից դուրս կամ դրանց ներսում սպանդ իրականացնելու դեպքում յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է երաշխավորի, որ կենդանիները պաշտպանված են խուսափելի ցավից կամ տանջանքից:

Գլուխ 2-րդ - Կենդանիների փոխադրումը սպանդարաններ և նրանց պահումը հատուկ՝ սպանդանոցներին կից, անասնոցներում մինչև սպանդի ենթարկելը

Հոդված 3

1. Կենդանիները փոխադրամիջոցներից պետք է իջեցվեն որքան հնարավոր է շուտ: Փոխադրամիջոցներում սպասելու ընթացքում նրանք պետք է պաշտպանված լինեն անբարենպաստ եղանակից և ապահովվեն անհրաժեշտ օդափոխությամբ :
2. Կենդանիների փոխադրման և սպանդանոցին կից անասնոցներում պահելու համար պատասխանատու անձնակազմը պետք է ունենա անհրաժեշտ գիտելիքներ և հմտություն և պետք է ապահովի սույն Կոնվենցիայում նշված պահանջների:

Մաս առաջին – Կենդանիների փոխադրումը սպանդանոցի շրջակայք

Հոդված 4

1. Կենդանիները պետք է տեղափոխվեն և տրանսպորտային միջոցներից իջեցվեն խնամքով :
2. Կենդանիներին տրանսպորտային միջոցներից իջեցնելու համար պետք է օգտագործվեն համապատասխան հարմարանքներ՝ կամրջակներ, թեքուղիներ և անցումներ: Հարմարանքները պետք է կառուցվեն այնպիսի հատակով, որը թույլ կտա ամուր հենարան ունենալ ոտքերի տակ և անհրաժեշտության դեպքում արգելափակված լինի կողքերից: Կամրջակները, թեքուղիները և անցումները պետք է ունենան հնարավորինս փոքր թեքություն :
3. Կենդանիները չպետք է վախեցվեն կամ գրգռվեն : Ամեն դեպքում պետք է հոգալ, որ նրանք շուտ չգան և չընկնեն կամրջակներից, թեքուղիներից կամ անցումներից: Մասնավորապես, կենդանիները չպետք է բարձրացվեն գլխից, ոտքերից կամ պոչից, այնպես, որ դա նրաց համար ցավի կամ տառապանքի պատճառ հանդիսանա:
4. Անհրաժեշտության դեպքում կենդանիները պետք է ուղղորդվեն առանձին-առանձին: Միջանցքները, որոնց միջով կենդանիները պետք է տեղաշարժվեն, պետք է նախատեսվեն այնպես, որ կենդանիները չկարողանան իրենց վնասել :

Հոդված 5

1. Երբ կենդանիները տեղաշարժվում են, պետք է օգտագործվեն նրանց հոտային (հոտ՝ որպես կենդանիների խումբ) բնազդները: Գործիքները պետք է կիրառվեն միայն ու միայն կենդանիներին ուղղորդելու համար և միայն շատ կարճ ժամանակահատվածում: Մասնավորապես, արգելվում է դրանցով հարվածել կամ ազդել նրանց մարմնի զգայուն մասերի վրա: Էլեկտրական ազդեցության միջոցները կարող են կիրառվել միայն ցուլերի և խոզերի նկատմամբ, պայմանով, որ էլեկտրական հարվածները կտևեն երկու վարկյանից ոչ ավելի, ճիշտ հաճախականությամբ (ժամանակի մեջ) և որ կենդանիները կունենան հարվածներից խուսեփելու համար անհրաժեշտ տարածություն; նման էլեկտրաշոկը պետք է կիրառվի միայն համապատասխան մկանների վրա:
2. Կենդանիների պոչերը չպետք է սեղմվեն, ոլորվեն կամ ջարդվեն և նրանց աչքերը չպետք է ծածկվեն: Հարվածները, մասնավորապես ոտքով, արգելվում են:
3. Կենդանիներ պարունակող վանդակների, զամբյուղների և արկղերի հետ պետք է զգույշ վարվել: Դրանք չպետք է զցել հատակին կամ շարտել:
4. Կենդանիները, որոնք տեղափոխվում են ձկուն և ծակոտկեն հատակ ունեցող վանդակներով, զամբյուղներով կամ արկղներով, պետք է իջեցվեն հատուկ խնամքով՝ նրանց վերջույթները վնասվածքից զերծ պահելու նպատակով:

Հոդված 6

1. Կենդանիները չպետք է տեղափոխվեն սպանդի վայր, եթե չեն ենթարկվելու սպանդի անմիջապես:
2. Կենդանիները, որոնք տեղ հասնելուն պես չեն ենթարկվում սպանդի, պետք է պահվեն սպանդանոցին կից հատուկ փարախներում:

Մաս երկրորդ - Փարախում պահելը**Հոդված 7**

1. Կենդանիները պետք է պաշտպանվեն անբարենպաստ կլիմայական պայմաններից: Սպանդանոցները պետք է ապահովված լինեն կենդանիներին պահելու համար բավարար քանակի մուրքներով և անասնոցներով՝ կենդանիներին անբարենպաստ եղանակից պաշտպանելու համար:
2. Այն տարածքների հատակը, ուր կենդանիները տեղափոխվում, իջեցվում, պահվում կամ ժամանակավոր հաստատվում են, պետք է լինի այնպիսին, որ կենդանիները չսահեն: Հատակը պետք է լինի այնպիսին, որ այն հնարավոր լինի մաքրել, ախտահանել և լավ չորացնել:
3. Սպանդանոցները պետք է ունենան ծածկած տարածքներ՝ կերակրամաններով և ջրամաններով, ինչպես նաև կենդանիներին կապելու համապատասխան հարմարանքներով:

4. Կենդանիները, որոնք գիշերը պետք է անցկացնեն սպանդանոցներում, պետք է տեղավորվեն և, եթե պահանջվում է, այնպես կապվեն, որ կարողանան պառկել:
5. Տեսակի, սեռի, տարիքի կամ ծագումով բնականորեն իրար հետ անհամատեղելի կենդանիները պետք է իրարից առանձնացվեն:
6. Կենդանիները, որոնք տեղափոխվել են վանդակներում, զամբյուղներում կամ արկղերում, որքան հնարավոր է շուտ պետք է սպանդի ենթարկվեն, այլապես նրանց պետք է ապահովել ջրով և կերով՝ համապատասխան 8-րդ հոդվածի դրույթների:
7. Եթե կենդանիները ենթարկվել են բարձր ջերմաստիճանի ազդեցությանը խոնավ եղանակին, նրանք պետք է տեղավորվեն զով պայմաններում:
8. Որոշակի կլիմայական պայմանների դեպքում /օրինակ, բարձր խոնավություն, ցածր ջերմաստիճան/ կենդանիները պետք է տեղավորվեն լավ օդափոխություն ունեցող շինություններում: Կերակրման ժամանակ մուրքները պետք է ունենան բավարար լուսավորություն:

Մաս երրորդ - Խնամք

Հոդված 8

1. Եթե կենդանիները հնարավորին չափ շուտ չեն հասցվում սպանդավայր, ապա սպանդանոց հասնելուն պես նրանք պետք է ջրվեն:
2. Բացառությամբ այն կենդանիների, որոնք պետք է սպանդի ենթարկվեն ժամանուհից տասներկու ժամվա ընթացքում, մյուսներին հետագայում համապատասխան ժամանակահատվածներով պետք է տրվի չափավոր սնունդ և ջուր:
3. Եթե կենդանիները չեն կապվել, նրանց պետք է ապահովել այնպիսի կերակրամաններով, որոնք հնարավորություն են տալիս սնվելու առանց անհանգստության:

Հոդված 9

1. Կենդանիների առողջական վիճակը պետք է հետազոտվի յուրաքանչյուր առավոտ և երեկո:
2. Հիվանդ, թույլ կամ վիրավոր կենդանիները պետք է անմիջապես սպանդի ենթարկվեն; եթե դա հնարավոր չէ, ապա նրանք պետք է առանձնացվեն և սպանդի ենթարկվեն որքան հնարավոր է շուտ:

Մաս չորրորդ - Այլ դրույթներ

Հոդված 10

Հյուսիսային եղջերուների առնչությամբ յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ կարող է թույլ տալ մասնակի շեղումներ սույն Կոնվենցիայի Գլուխ II –ում ամրագրված պահանջներից

Հոդված 11

Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ կարող է նախատեսել, որ սույն Կոնվենցիայի Գլուխ II –ում ամրագրված դրույթները համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*) պետք է կիրառվեն սպանդանոցներից դուրս՝ կենդանիների տեղաշարժման և փարախներում պահելու ժամանակ:

Գլուխ երրորդ - Սպանդ**Հոդված 12**

Կենդանիները պետք է անշարժեցվեն, եթե անհրաժեշտ է, անմիջապես սպանդից առաջ; և, հաշվի առնելով 17-րդ հոդվածում նշված բացատրությունների, պետք է համապատասխան ձևով շժմեցվեն :

Հոդված 13

Խոշոր եղջերավոր անասունների ծիսական սպանդի դեպքում սպանդից առաջ կենդանիները պետք է անշարժեցվեն մեխանիկական միջոցների օգնությամբ, որոնք նրանց չեն պատճառի ցավ, տանջանք, գրգռվածություն, վնասվածք կամ վնասում :

Հոդված 14

Որևէ միջոց, որը կարող է տանջանքի պատճառ հանդիսանալ, չպետք է կիրառվի; կենդանիների հետևի ոտքերը չպետք է կապվեն, ոչ էլ նրանք պետք է կախվեն շժմեցնելուց առաջ, կամ ծիսական սպանդի դեպքում՝ մինչև արնագրկման ավարտը : Ընտանի թռչունները ու ճագարները, սակայն, կարող են կախվել՝ պայմանով, որ նրանք կշժմեցվեն անմիջապես կախելուց հետո:

Հոդված 15

Սպանդին առնչվող այլ գործողություններ, բացառությամբ՝ առաջին հոդվածի 2-րդ կետում նշվածների, կարող են սկսվել միայն կենդանիների մահից հետո :

Հոդված 16

1. Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրի կողմից թույլատրված շժմեցման մեթոդները պետք է կենդանուն զցեն անգիտակից վիճակի մեջ, որը կտևի մինչև կենդանու սպանդի ավարտը, ինչը նրան կազատի տանջանքից:
2. Պունտիլլայի, մուրճի կամ կացնի օգտագործումն արգելվում է:
3. Միասնբակավոր, որոճող կենդանիների և խոզերի դեպքում թույլատրվում են շժմեցման միայն հետևյալ միջոցներ.
 - մեխանիկական միջոցներ, որոնք հարվածում կամ ծակում են ուղեղի շրջանում
 - էլեկտրոնարկոզ
 - գազային անզգայացում

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է թույլատրել բացառություններ սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերում նշված դրույթներից այն դեպքում, երբ կենդանին բուժման վայրում սպանդի է ենթարկվում սեփականատիրոջ կողմից՝ անձնական սպառման նպատակով:

Հոդված 17

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է նախատեսել բացառություններ նախնական շննեցմանը վերաբերող դրույթներից հետևյալ դեպքերում
 - սպանդ կրոնական ծիսակատարության նպատակով
 - սպանդ արտակարգ իրավիճակների դեպքում, երբ շննեցումը հնարավոր չէ իրականացնել
 - ընտանի թռչունների և ճագարների սպանդ այնպիսի թույլատրված եղանակներով, որոնք առաջացնում են ակնթարթային մահ
 - կենդանիների սպանդ սանիտարական վերահսկողության նպատակներով, երբ դա դառնում է անհրաժեշտ՝ հատուկ նկատառումներից ելնելով:
2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, օգտվելով սույն հոդվածի առաջին կետի դրույթներից, պետք է երաշխավորի, որ կենդանիները յուրաքանչյուր նման սպանդի դեպքում կշննեցվեն և կազատվեն ցանկացած ցավից կամ տանջանքից:

Հոդված 18

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է հստակեցնի այն անձանց որակավորման չափանիշները, ովքեր մասնագիտորեն զբաղվում են կենդանիների անշարժեցման, շննեցման և սպանդի աշխատանքներով:
2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ապահովի, որ կենդանիների անշարժեցման և շննեցման համար անհրաժեշտ գործիքները, սարքերն ու սարքավորումները համապատասխանեն սույն Կոնվենցիայի պահանջներին:

Հոդված 19

Յուրաքանչյուր պայմանավորվող կողմ, որը թույլատրում է սպանդ համաձայն կրոնական ծիսականարության, եթե ինքը չի տալիս անհրաժեշտ թույլտվություն, պետք է երաշխավորի, որ կենդանիների զոհաբերությունները համապատասխան ձևով թույլտրված են կրոնական մարմինների կողմից :

Գլուխ չորրորդ - Եզրափակիչ դրույթներ

Հոդված 20

1. Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման համար Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների և Եվրոպական Տնտեսական Միության կողմից: Այն ենթակա է վավերացման, ընդունման և հաստատման: Վավերացման, ընդունման կամ հաստատման փաստաթղթերն ի պահ են տրվում Եվրոպայի Խորհրդի գլխավոր քարտուղարին:
2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների կողմից վավերացման, ընդունման կամ հաստատման չորրորդ փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից վեց ամիս հետո:

3. Այն Ստորագրող Կողմի դեպքում, որը կվավերացնի, կընդունի կամ կհաստատի սույն հոդվածի 2-րդ կետում նշված օրվանից հետո, Կոնվենցիան ուժի մեջ կմտնի վավերացման, ընդունման և հաստատման փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից վեց ամիս հետո:

Հոդված 21

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո՝ Եվրոպայի Խորհրդի Մինիստրների Կոմիտեն կարող է համապատասխան պայմանների դեպքում հրավիրել ցանկացած ոչ-անդամ պետության միանալ սույն Կոնվենցիային:
2. Նման միացումը պետք է իրականացվի Եվրոպայի Խորհրդի Գլխավոր Քարտուղարին ի պահ հանձնելով միանալու մասին փաստաթուղթը և այն կհամարվի կատարված փաստաթուղթը հանձնելուց վեց ամիս հետո :

Հոդված 22

1. Յուրաքանչյուր պետություն ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման, միանալու մասին իր փաստաթղթերն ի պահ հանձնելու ժամանակ կարող է նշել տարածքը կամ տարածքները, որտեղ պետք է կիրառվի Կոնվենցիան:
2. Յուրաքանչյուր պետություն վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին իր փաստաթղթերն ի պահ հանձնելիս կամ հետագայում ցանկացած այլ ժամանակ կարող է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր Քարտուղարին ուղղված հռչակագրով ընդլայնել սույն Կոնվենցիայի գործողությունը ցանկացած այլ տարածքի կամ տարածքների վրա, որոնք նշված են հռչակագրում և որոնց միջազգային հարաբերությունների համար նա պատասխանատու է կամ որոնց անունից նա լիազորված է պարտավորություններ վերցնել:
3. Համաձայն նախորդ կետում նշված կարգի՝ կատարված ցանկացած հռչակագիր, դրանում նշված տարածքի առնչությամբ կարող է հետ կանչվել՝ տեղեկացնելով Եվրոպայի Խորհրդի Գլխավոր Քարտուղարին: Այսպիսի հետկանչն ուժի մեջ է մտնում Գլխավոր Քարտուղարի կողմից նոտիֆիկացիան ստանալուց վեց ամիս հետո:

Հոդված 23

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ կարող է իր մասով չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան՝ նոտիֆիկացիա ուղղելով Եվրոպայի Խորհրդի Գլխավոր Քարտուղարին :
2. Նման չեղյալ հայտարարումը սկսում է գործել Գլխավոր Քարտուղարի կողմից նման նոտիֆիկացիա ստանալուց վեց ամիս հետո :

Հոդված 24

Եվրոպայի Խորհրդի Գլխավոր Քարտուղարը տեղեկացնում է խորհրդի անդամ պետություններին և յուրաքանչյուր պայմանավորվող կողմին, որը խորհրդի անդամ չէ, հետևյալի մասին.

ա. ցանկացած ստորագրության

բ. վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու մասին

գ. սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրվա մասին՝ համաձայն 20 և 21-րդ հոդվածների

դ. յուրաքանչյուր ստացված հռչակագրի մասին՝ համաձայն 22-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների

ե. ցանկացան ստացված նոտիֆիկացիայի մասին՝ համաձայն 22-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթների

զ. յուրաքանչյուր ստացված նոտիֆիկացիայի և ուժը կորցնելու օրվա մասին՝ համաձայն 23-րդ հոդվածի դրույթների

Ի վկայություն որի, ներքոստորագրողները, պատշաճ ձևով լիազորված լինելով՝ ստորագրեցին սույն կոնվենցիան:

Կատարված է Ստրասբուրգում 1979թ. մայիսի 10-ին անգլերեն և ֆրանսերեն լեզուներով ; երկու տեքստերն էլ ունեն նույն իրավաբանական ուժը; մեկ բնօրինակով, որը պետք է ի պահ հանձնվի Եվրոպայի խորհրդի արխիվ: Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը պետք է փոխանցի հաստատված օրինակները յուրաքանչյուր ստորագրողին և միացած կողմերին: